

Երկու թաղերի կենտրոնումն էր եկեղեցին ու նրա գիմնադր լայնաաբաժ ճեպարակներն, ուր անհիշելի ժամանակներից հավաքվում էր Արճակի նախիրը: Այդանդ էին իրենց շնորհքը ցուցաբերում Սըվի Կառապետ (սուրբ Կարապետի) լարախաղացները: Այգտեղ էին իշնում Գյավառ քրդական գյուղի քրդերը, որոնք մի ամսով Արճակ էին գալիս հունձ անելու:

Քյողարի թաղը փոքր էր, ընակչությունը՝ նոսր, սակայն այդտեղ եռուղեք շատ էր: Քյոզարի թաղումն էին գտնվում դավառապետարանը, ոստիկանատունը, հեռագրատունը, թեյարանը ու այլևայլ հիմնարկներ: Նահանգի կենտրոն Վան քաղաքը և Պարսկաստանի սահմանագլխին եղած Սարա կայսերականիսա փողբիկ քաղաքն իրար միացնող ընդհանուր ճանապարհով երթեկող ամեն տեսակի ուղեորներ, որոնք գիշերելու էին Արճակում, պերադասում էին լինել Քյողարի թաղում: Իսկ այդ ուղեորները ընդամենով էին ու ընդամենով փոխադրվող ղորամասեր, դեսպանությունների հետ առնչվող ժառանգիրացիներ, պարսկական առեւտրական քարավաններ՝ ուղեորի շարաններով, քուրդ համիդիե ասկյարներ, ինչպես նաև առեւտրականներ ու արհեստավորներ:

Ամենօրյա այս շփումները Քյողարի թաղեցոց մեջ դարձացրել էին նորի ընկալման, քաղաքավարի նիստուկացի, կիրթ վարմունքի ու ինքնազնահաւան ղգացողություն և վայելույ արաաքին պահպանելու ձգտում:

Քյողարի թաղեցոց նմանօրինակ «քաղքցութենք» ահաճություն էր պաաճառում փոսթաղեցոց, որոնք իրենց նիստուկացում պահպանում էին նահապետական պարզություն:

Դպրոցը գտնվում էր դուղից դուրս և ոչ մի թաղի կողմի վրա չէր ընկնում, այնուամենայնիվ,

դպրոցում պաշտոնավարող ուսուցիչները ես նախընտրում էին ապրել Քյողարի թաղում:

Ինչքան էլ արճակցոց մեջ գայություն ունենար թաղային տարրություն, միեւնույն էր, արյունակցական, խնամիական, հարեանական, աշխատանքային հաղար ու մի թելերով նրանք հյուսված էին միմյանց, Որքան էլ փոսթաղեցինք քյողարի-թաղեցոց համարին «պոչով-պոչով», իսկ քյողարի-թաղեցիք նրանց անվանեին «վայրենի», ընդհանուր առմամբ միեւնույն հատկանիշների տեր մարդիկ էին՝ թե՛ պաաւախնդությամբ, թե՛ աղպսիրությամբ, թե՛ հյուրընկալությամբ և թե՛ անխարդախությամբ: Տարրությունն այն էր, որ փոսթաղեցիք միմյանց հանդեպ ցուցաբերելով սեր և մանրություն, կիրթ չէին, կաաակների մեջ նույնիսկ հայհոյանքներ էին գործածում, մի րան, որ քյողարի-թաղեցոց մեջ ընդունված չէր: Նրանց հայրաները, թեկուզ և լինեին քաղաքից ընդված աղջիկներ, շաա շուա աղաա ել ու մուա էին անում հարեանների աները: Կանայք և աղջիկները ավելի շաա էին մասնակցում դաշաային աշխատանքներին:

Այս ամենը նկաաելի էր Արճակի ներսում, իսկ դրսում, ուրիշ գավառների ընակիչների աչքում Արճակը Արճակ էր, արճակցին՝ արճակցի՝ քաղքցուն ըարեմար, դանգի (հարուստ), քիրար (հպարտ): Դրանք, այդ ուրիշները, արճակցոց նման որակում էին աալիս. «Դոր էլ էրթաա, խացդ ի խերիք, Առճակն էրթաա՝ կալին շիրիկ» (Ուր էլ դնաա, հացդ ըավարար է, Արճակ դնաա, նրա կալի հասույթին իրավահավասար ես):

Արճակ դյուղը ըաղկացած էր 160 անից, ըուրը հայեր, ըացաոյալ վանեցի մի թուրք ծերուկից և իր կնոջից:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ա Ն Ց Ք Ե Ր

Արճակ դյուղը, որ անցյալ դարավերջին աակավին կոչվում էր շեն Արճակ, յուրովի է մասնակցել 1890-ական թվականների սկզբների աղպային-աղաաադրական շարժումներին: Այդ շարժումների կազմակերպիչներն ու դադափարախոսները մեծ մասամբ կովկասահայեր էին, որոնք Վան հասնելու և այնանդից իրենց դործունեությունը ծավալելու համար, ըացի Թավրիզ-Բաշկալա ուղուց, ունեին ես երկու ճանապարհ: Մեկն անցնում էր ոռա-թուրքական սահմանագլխային Օրգով պահակակետով, Բայաղեաի դավաւառի մի շարք ավարաոու քրդական դյուղերով,

ապա Վանի նահանգի քրդաշաա ընակավայրեր ունեցող Արաղայի դաշաով, Բերկրի մուպուրանիսա ավանով, այնուհետև Թիմարի գավառով ու նոր միայն Վան հասնում: Այս ուղին խիսա վաանպավոր էր:

Վան աանող երկրորդ ուղին սկսվում էր Սաւմասից. պարսկա-թուրքական սահմանադիաային կայսերականիսա Սարա փողբիկ քաղաքից հետո, անցնում մի շարք քրդական դյուղերով, ապա Արճակով և դավառի հարավի հայաշաա դյուղերով մանում Վան: Վերջինս ավելի անվրաանդ էր, քանի որ հիշյալ ճանապարհով էին

ընթանում պարսից առեւտրական քարավանները, որոնցում ծալտվելով, հայ ֆիզայինները կարողանում էին անցկացնել անհրաժեշտ դրականութուն և դեներ:

Արճակի երկու ուսուցիչներ՝ Մովսես Զաքարյանը (Պողանց գյուղացի) ու Մարգար Հյուսյանը (րնիկ արճակցի) գրադետ ու վստահելի երիտասարդներից կազմել էին մի խումբ, որը դիշերով գյուղից դուրս էր ասնում ու վան հասցնում ընդհատակյա աշխատող «կովկասահայ կաշախներին» ու նրանց «ապրանքը»: 1890-ական թվականների կոտորածների նախօրյակին՝ Արճակում դրությունը սրվում էր Համիդիեական քրդերի հարձակումները հայկական գյուղերի վրա, իշխանությունների թողալովյան պաաճառով, հաճախակի են դառնում:

1895 թ. նոյեմբերի մեկին Արճակ էր պալիս կուրա-ասկյարների մի հարյուրակ: Մյուսուրը գյուղի տվադանիններին հայտնում էր, որ այդ դորամասը պիտի Արճակում մնա՝ ապագա թալանումներից դուրսը պաշապանելու համար, ուստի օրը մի ջվալ տյուր և շարաթական մի մասցու անասուն պետք է տրվի դորքին՝ որպես հավելյալ սնունդ: Նույն օրն էլ դպրոցը վեր է ածվում դորանոցի, իսկ հակադիր մասում, հարապի կողմից կառուցված երկհարկանի մի տուն՝ դիտանոցի:

Մինչև 1896 թ. հունիսի 3-ը, այսինքն՝ վան քողաքի հայության ջարդի օրը, Արճակը թեե ծանր լծի տակ, խիստ հսկողության ենթակա, այնուամենայնիվ, իր առօրյա աշխատանքին էր լծված: Հունիսի 3-ից մինչև 7-ը ընակչությունը դուրսից դուրս պալու իրավունքից դրկվում էր: Փոս թաղում մնալը դառնում էր երկյուղալի, որովհետև ավարաու քրդեր են ելումուս անում: Ժողովուրդը հավաքվում էր քյոզարի թաղը, ուր դորապետն ու վարչական կադմն էր:

Հունիսի ութի լուսարացին, դուրսի հարավային և արևելյան կողմերի ըլուրներում հայանվում են վանի կոտորածից վերադարձող տասը քուրդ համիդիե ցեղապետներ՝ իրենց ասկյարներով, իսկ Սարայի կողմից էլ գալիս է Սարայի կայմակամը՝ մի հարյուրակ սուարի (հեծյալ) ղորքով:

Հունիսի ութի երեկոյան, համիդիե ցեղապետները պատգամավորություն են ուղարկում, Արճակի վարչությանը հայտնում, որ ռիենք եկել են սովթանից իրենց վստահված սուրը դործը կատարելու և սպասում են իշխանությունների հեռանալուն: Նրանք կայմակամի ու մյուսուրի առաջն են գնում հարյուր հիսուն օսմանյան չիրա, որպես արվելիք թալանի փոխհատուցում: Մյուսուրը պա-

հանջում է նաև հառակոնիս դյուղի ռգինը, քրդերը ավելացնում են ևս հիսուն ոսկի: Այս դործարքի ընթր (որ հաղորդում է Արճակի դղիրը) կայծակի առադությամը տարածվում էր հառակոնիսցիները, որ գտնվում էին ղորքի հսկողությունից աղատ և համիդիե դորամասերի օղակումից դուրս, կարողանում են մի կերպ կոտորածից աղաավել, ապավինելով քրդական ոչ համիդիե մեծ և փոքր Մաղրա դյուղերի ընկերի պաշապանությունը, մի քանի ժամվա մեջ դառնալով ընչաղուրկ:

Այլ է լինում Արճակի ճակատագիրը:

Հունիսի իննի լուսարացին թուրքական վարչակադմն ու ղորքերը հեռանում են դյուղից, ուղղություն վերցնելով դեպի վան: Արճակցիները հետեում են նրանց: Ասկայն ոսաիկաններն ու պինվորները հրացանի խղակոթերով հարված հասցնելով մեծին ու փոքրին, արգելում են դյուղից դուրս գալ: Համիդիեները խիտ օղակով մոտենում են դյուղին: Ահարեկված, անպաշապան դյուղացիների մի մասը սաիաված ապաստանում է ևկեղեցում, դուրը ներսից փակելով: Մնացյալները թաքնվում են առուններում, ծառասաաններում, շատերն էլ հնարավորություն չեն ունենում թաքնվելու: Համիդիեները անմիջապես ջարդում են եկեղեցու դուրը և ըլուրին դուրս քշում: Մինչ նրանք դրադված էին տղամարդկանց կոտորելով, կողոպտելված կանանց, աղջիկների կիսամերկ ու սարսափահար որոշ խմբեր, ահից կարկամած մանուկներին շալակած, փախում են եղեղնուտները կողմը և ուղղություն վերցնում դեպի վան: Իսկ քրդերը, իրենց հետ առնելով խված անասուններին ու հարյուր ութսուն ջահեկ կանանց ու աղջիկների, շարվում են դեպի Արաղայի դաշա: Վան փախչողների մեջ ոչ մի աղամարդ չկար: Հասնելով վան, կանայք ապաստանում են ամերիկյան միսիոներական ընկերության ընդարձակ ըակերում, իսկ դերի վերցրած 180 կանայք հեռեյալ ճակատագիրն են ունենում: Նրանց քշում են Պարսկաստան վաճառելու նպատակով: Այն պահին, երբ դերիններն ու գերեվարողները դանվում էին Բերկրի դավառի Արաղայի դաշտի հաշան դյուղի սահմանում, պաաահականորեն այդանդով անցնում է Արաղայի գյուղերից մեկում ապրող, դեղջուկի աարաղով մի հայ քահանա: Իրադեկ լինելով դրությունը, քահանան շաապում է հաշան, մտնում Հսեն ընյի ապարանքը և հանդիպում բնյի մորը՝ այրի իշխանուհուն, աղոթքից առաջ ջրամանը ձեռքին լվացվելու դնալիս: Քահանան աղերսում էր, որ իշխանուհին, հանուն ամենաաեղծ աղբալի, փրկի դերուհիներին: Այրին խոստանում է օգնել հայ կանանց,

քանի որ քաջանան նրան գիմել էր սղոթքի պահին: Բնյի մայրը կանչել է տալիս խնշույքի նստած որդուն և անհծքի սպառնալիքով ստիպում նրան գերեզմարողներից խել հայուհիներին: Բնյը կատարում է մոռ պահանջը, և գերիները մնում են խաչանում, օթեան գտնելով անդի հայ ընտանիքներում:

Կոտորածից ճողոպրած ու ցարենի արտերում թաքնված շուրջ հարյուր քուտն տղամարդիկ, մարգոսպանների հեռանալուց հետո, ուսուցիչ Մարստրի գլխավորությամբ, փախչում են ոչ շատ հեռու ընկած քրդական Վերին ու Ներքին Մաղրոս գյուղերի ընկերի մոտ, որոնք ոչ համիդի էին և խնդրում են իրենց հովանավորել: Ներքին Մաղրոսի ընկերները չեն համարում, որ պահանջում է նրանց, սակայն պատվիրում է, որ Մաղրոսից գուրս չգան, որպեսզի առայժմ շրջակա վայրերի քրդերը չիմանան, թե իրենք այդքան մեծածիղջ հայերի են ապաստանել:

1896 թ. հունիսի 30-ին, Մաղրոս է ժամանում երեսուն սուարի (հեծյալ), իր հետ բերելով վանի վալի-փաշայի հրամանը, այն է՝ անհապաղ ետ ուղարկել Արճակում պառակտած ղեկավարի ժամանակ մահմեդականների տները ապաստանած ընդհանուր հայերին¹:

Աուարիները արճակցի տղամարդկանց բերում հասցնում են, 22 օր անմարդարնակ մնացած, Արճակ ու իրենք շտապում Արաղայի խաչան գյուղը՝ այնպեղից ետ բերելու երիտասարդ կանանց ու աղջիկներին: Տուն են գաղտնի նաև հեռավոր քրդական գյուղեր տարված ու ընդ մահմեդականացված տասից տասնհինգ ասրեկան արճակցի մի քանի պատանի:

Արճակցիները վանի արհեստավորներից պարաքով գործիքներ են գնում, թուրք անասնատերերից՝ «մարարայի» պարավորություններով լծկան սաանում, հավաքում են հացահատիկի իրենց բերքն ու նույն աշնան էլ հարյուրից ավելի տղամարդ (որից ութը՝ ընտանիքով) մեկնում է Կովկաս՝ գրամ վստատակելու:

Կոտորածներից հետո Արճակ գյուղն առժամանակ գտգարում է աղաապարական շտրվումների մասնակցելուց:

1908 թ. սկզբներին Արճակում կատարվեցին մի շարք խուղարկություններ ու բռնություններ: Վանում՝ Դհերցի Դավուն իր գավաճանական

մատնության ժամանակ նշել էր նաև Արճակի անունը: Բայց իշխանությունները, չնայած գործադրած ճնշումների ու առանձին մարդկանց խուղարկումների, Արճակում թաքցված գեներ չհայտնարեցին: Մեկ ամիս անց, Դավույի օրինակով, անձնական մասն վերծիսնորությունից գրված, մատնություն կատարեց նաև Արճակում խանութ պահող վանեցի Գեորգի երիտասարդ որդին՝ Պապոր Արամը, հայտնելով այն արճակցիների անունները, որոնց մոտ ղենք կար թաքցված: Հետեցին նոր բռնություններ ու խուղարկումներ, որոնց միջոցով, այս անգամ արգեն, իշխանություններին հաջողվեց հավաքել 40 հրացան ու փամփուշաներ:

1908 թվականի սահմանագրությունից հետո արճակցիները նորից մասն աղաապարական նորածն պաշտրի ոլորտը, սակայն ոչ նախկին ոգևորությամբ: Հեռադա 5-6 ասրիներին ղենցին մի քանի տասնյակ ղենք, փամփուշա, սակայն այն համոզմամբ, որ գրանք ոչ մի բանի էլ պեք չեն:

1914թ., երբ պայթեց համաշխարհային առաջին պատերազմը, արճակցիք ունեին երեսունից ավելի հրացան, տասն ասրեկան, որից հինգը՝ մաուդեր, թուրքիան պատերազմի մեջ մանելուց հետո Արճակում սահղծվեց այնպիսի գրություն, որ անհնար էր աղաապարական ամենաթույլ շարժում իսկ ծավալել:

1914 թ. ամառը շատ բերքառատ եղավ: Մերեր նման տոնատությունը համարում էին «գլխակեր»: Գուշակությունը կատարվեց, Հայտարարվեց ողջմական ղրություն: Օգոստոսին գյուղում եղավ ընդհանուր ղորականչ: Ոստիկանների հսկողությամբ վան ասրվեցին գրեթե բոլոր աղաապարգիկ: Հապճեպորեն գարոցն ու Կոռյան ընտանիքի ութ սենյականոց նորակառույց տունը վերածվեցին գորանոցի, եկեղեցու ձիթհանը վերածվեց ղինվորական փոխ, գյուղը լցվեց երթևեկ ղորամասերով: Արճակից գորակոչվածներին անղավորել էին վանի բերգի մոռակայքում գանվող գորանոցներում, այնուհետև ըստանել տարրեր գորամասերի վրա և ասրեր ճանապարհով ուղարկել այլևայլ վայրեր: Հավաքակայանում մնացածների նկատմամբ խիստ հսկողություն չկար, սակայն ղինվորական հրաման էր արճակվել՝ գասալիքներին ապաստան տվողների արաերը վառել, առանց խտրության: Արճակցիներից ոմանց հաջողվել էր հավաքակայանից գուրս ճողոպրել, նախքան ընդհանուր հաշվառման ենթարկվելը: Նրանցից մի քանիսը թաքնվել էին վանում, մյուսները գյուղ վերագարճան և սկսեցին գրաղվել իրենց առանին հոգ-

¹ Ուսուցիչներ Մարգարն ու Մովսեսը, որ գաղաաղողի Մաղրոսից վան էին անցել, ֆրանսիացի միսիոներների աշակցությամբ կարողացել էին վանի վալիից հրաման ստանալ՝ Արճակի փախստականներին գյուղ վերագարճնելու մասին:

սերտով, իսկ հավաքակայանից զինվոր ուղարկված մոտ քառասուն տղասարդուց հետագայում հայտնիվեցին միտն երեքը, որոնք Սարայի սոտերքում պինթափված ու սպանված հայերի դիակներին տակ էին թաքնված եղել:

Արճաթի վարչական, այսպես ասած, մյուլքյա (երկրային, հողային) կազմը այդ օրերին գրտնրվում էր կրավորական գերում: Հիշյալ պաշտոնյաները իրենց ընտանիքները գյուղից հեռացրել էին և իրենք երկու-երեք հոգով ղրաղեցնում էին մի սենյակ: Այնպես որ, վարչական կազմի կողմից ղրաղեցրած սենյակները ևս, այլևայլ տներ հարմարավետ համարվող սենյակների հետ բարձրաստիճան ղինվորականների արամադրության աակ էին: Մի տուն վերածվել էր ղինվորական ճաշարանի, մի այլ աուն՝ ցորենի պահեստի: Եվ այսպես, Արճաթն սովելի շուա նման էր ղորանոցի, քան պավառի վարչական կենտրոնի:

1914—15 թթ. ձմեռը եղավ բացառիկ մեղմ, այնքան, որ դյուղամիշի երկու ջրաղացները (Վանից տան ու Տեր Կարապետի) ոչ մի օր չսառեցին: Հիշյալ ջրաղացներում աղում էին ղինվորականների համար պահանջվող հացահատիկը, սակայն ղինվորական միակ փուռը սպառվող հացը չէր հասցնում թխել, ուստի ընակչության վրա էին բաժանում պարկերով ալյուր՝ հացը թոնիրներում թխելու համար: Ալյուրին, խմորին ու թխած հացին հսկելու էին դալիս երկու կամ երեք ղինվոր:

Ակսվեցին լուրեր պառվել, թե ոռոսական բանակը մոտենում է: Մի առավոտ ղինաթափ արեցին ղորամասերում գտնվող հայ ղինվորներին, որոնց թիվը երկու հարյուրի էր հասնում: Նրանք ամալյա-ասկյար կոչումով աարվեցին Սարա, այսինքն՝ ոաղմաճակաա, իսկ դյուղացիներից տասներկու հոգու, որ ոսաիկան էին նշանակված, տվել էին հրացան, բայց՝ ոչ փամփուշա, ոչ էլ հանդերձանք:

Փետրվար ամսին դավառի հայ-քրդախառն Հաղարա դյուղի հայերը, որ մոտ քառասուն տուն էին, ղիշերով, խուճապահար Արճաթ լցվեցին: Պատճառը հետեյալն էր: Ռուսական բանակը, որ առանց մեծ դժվարության հասել էր սահմանամերձ հայ-քրդախառն Հասիսաան դյուղը, նահանջի հրաման ստանալով, սնմիջապես եա էր դարձել՝ իր հետ տանելով նաե տեղի հայերին: Դեռես ոռոսական բանակի առաջնաալու օրերին հաղարացի քրդերն ու հայերը երղվել էին, որ ինչ էլ պաասհի, միշտ կանգնած մնան իրար թիկունքի: Իրենց խոստմանը հասաա մնալով, քրդերը հայերին հասկացրել էին՝ դիմել շուաափույթ փախուսաի,

քանի գեո վրա չէին հասել ուրիշ տեղերի քրդերն ու ասկյարները: Հաղարացի քրդերն իրենց երդումը պահել էին այնքանով, որ չիմանալու էին տվել հասագյուղացիների Արճաթ փախելը՝ այն էլ անասուններով: Հաղարացի հայերը պատասպարվեցին արճակցիների տներում:

Գյուղից Սարա տանող ուղին արդեն արյունալի էր, իսկ դեպի Վան տանողը՝ վտանգավոր ու դժվարանցանելի: Ուստի Վան գնացողները ճանապարհ էին ընկնում ղիշերով և այն էլ ոչ բանուկ ճանապարհով:

Ջորաշարժերը օր-օրի գաոնում էին հաճախակի, իսկ ղինվորները՝ անզուսպ: Գյուղ հասնելուն պես, ղիշերվա որ ժամն էլ լիներ, պաասհած դուռը կաաաղորեն ծեծում էին և մի փոքր ուշ բացվելու գեպքում՝ աղդ, կրոն հայհոյում: Ներս մանելուն պես պահանջում էին թոնիրը վառել ու աաք կերակուր պաարասակ:

Մարտն էլ անցավ: Գյուղում աարածված մանկական կարմրուկ հիվանդությունը մոլեղում էր: Խիստ ախուր, անշուք անցավ նաե Մեծ դատիկը: Դաշտերը լրիվ սևացել էին, ու անասուններին դուրս բերին արոաի: Ոմանք, սովորականի նման, վիժկիներով վարեցին դաան սրաերը՝ ոսպ ցանելու համար: Ապրիլի վեցին, թե յոթին Արճաթի աոբյան խախտվեց: Մադումով ալրանացի մեր մյուղուրը ոեսից երդում առնելով, դաղանապես հայտնել էր, որ այդ օրը, երեկոյան, Արճաթ է մտնելու Սարայի կայմակամը, իսկ հաջորդ օրը, առավոյան, կաաաղվելու է բանակից խուսափած երիտասարդների շուրջկալ և խորհուրդ էր տվել, որ երիտասարդները մի երկու օրով դյուղից հեռանան և ապա թե՛ ճկայմակամը դալու է իր հաաուկ ղորամասով, նրա ղինվորները անզուսպ են, կարող է պատահել նույնիսկ երիտասարդ կանանց պատվին կաչեն, թող այդ մասին էլ մաածենա:

Լուր սաացվեց նաե, որ Վանում դրությունը խիստ լարված է: Ջեվդեա փաշայի կարդադրությամբ Շաաախ մեկնած Իշխանն ու իր թկնապահները, նույն փաշայից հղված ղիվորների ձեռքով սրախողխող են արված: Վոամյանը ձերբակալված է, Արամը մի կերպ խուսափել է ձերբակալվելուց: Բերդի ու Թոփրաք կալեի թնդանոթների փողերն ուղղված են քաղաքամիշի ու Ալդեսաանի հայկական թաղերին: Վանից դուրս ղնացող բանուկ ճանապարհները բռնված են: Պետք է լինել խիստ զգուշավոր, որպեսզի միաոթամանակ ևս երկարի խաղաղությունը:

Հապաղում չեղավ: Ջինվորական տարիքի երիտասարդներն աիջապես Փոս թաղի աների

արանքով, առանձին-առանձին, վերցրած մինչ այդ խորը թաքցրած ղենքերը, դյուղից դուրս գալով, ուղղվեցին լճափ՝ եղեղնուտներում թաքնվելու, իսկ ղենքներն ու գլխերները դադարեցին կայմակամին ու նրա ղորամտսին դիմավորելու պատրաստությամբ:

Ապաստող Սարայի կայմակամի փոխարեն, մայրամուտին, գլուղ մաավ մոտ երեք հարյուր քուրդ Սովորական դարձած, ոչ այնքան էլ պահանջող համայնված այդ խմբավորումը հրաժարվեց երթևեկ ղինվորների համար նախատեսված օթևանից ու տեղավորվեց ասարեր անների ախոռների հողաններում:

Գիշերն անցավ ասղնապների մեջ, լսվում էին անկասուն կրակոցներ, իսկ առավոտը բացվեց խաղաղությամբ: Երկու ղորանոցների կայուն կողմող ղորամասերի սակավաթիվ ասկյարները հեռացել էին. հապճեպ հեռացել էին և նախորդ օրը ժամանած քրդերը: Ամեն ինչ այնքան խաղաղ էր, որ գլուղը լծվեց իր առօրյային: Տանու մանկահասակ հոտոցները լճափնյա մարդագետիները քշեցին անասուններն ու ոչխարները: Կտնայք վառեցին թոնիրները: Սակայն երկյուղը պատել էր մարդկանց: Տղամարդկանցից ոմանք լծեցին վիժկինեքը՝ նախորդ օրվա կիսաա թողած ոսպի ցանքն ավարակելու: Նախորդ օրվանից գլուղին հայտնի էր, որ մյուզուրը ոսպիկաններ է ուղարկել հառակոնիս՝ մարդ բռնելու: Այժմ էլ բերնեքերան անցավ, որ կայմակամից խուտափելու համար, ղես Սեդրակ Դոլյանն էլ է հառակոնիս փախել ու հեռն էլ ատրել իր մանկահասակ դստերը: Փոս թաղում կատարված այդ ղեպքը սնունդ տվեց մյուս մայրերին ու սկեսուրներին՝ հետևել հիշյալ օրինակին: Կես ժամում Փոս թաղի երիտասարդ կանանց ու աղջիկների մեծամասնությունը, հեռները վերցրած իրենց կարմրուկով հիվանդ մանուկներին, մայրերին ու սկեսուրներին բռնեցին ձնհալից ջրողող հառակոնիս գլուղի ճանապարհը: Առաջընթացները արդեն անցել էին Սրճակն ու հառակոնիսը սահմանադատող ճոշ գետը, իսկ մյուսները ղեռ նոր էին դուրս եկել դյուղից (վերջինները Քյոդարի թաղեցիներն էին), երբ հայտնվեցին մոտ երկու տասնյակ ոստիկան: Անցնելով հառակոնիս ջարժվող ջարքերի կողքով, արձակցոց ծանոթ այդ հին ոստիկանները սկսեցին հասկացնել իրենց «սիրելի բաջիներին», որ երկյուղ կրելու պաճառ չկա, որ փախուստով Արճակի մյուզուրի ու ոստիկանների պատվին քար են գցում, ու հողորել՝ որ չլքեն դյուղը: Ծտեից գնացողները

վերադարձան, իսկ առաջընթացները շարունակեցին ճանապարհը դեպի հառակոնիս: Արճակի ու հառակոնիսի հեռավորությունը մի քանի վերստ էր, հառակոնիս գլուղի կենտրոնում կար մի կլոր բլուր, որի ղագաթին էին գտնվում գլուղի եկեղեցին, դպրոցն ու գերեզմանոցը: Այդ բլրից երեռն էր ողջ շրջակայքը:

Մի ժամ, ժամ ու կես հաղիվ էր անցել արճակ-ցիների հառակոնիս հասնելուց, երբ հիշյալ բլրից նկատվեց ղեպի Արճակ ջարժվող մարդկային հեղեղ: Հասնելով Արճակին մարդկային այդ հեղեղը բաժանվեց երեք ճյուղի, մեկը Ասպարծես տակով տարածվեց մինչև «Քաղքի աար» կոչված բլրալանջերը և հասավ լճափ, մյուսը ցրվեց լճափնյա մարդագետիներում, իսկ միջին ճյուղը շարժվեց դեպի գլուղ:

Լսվեցին ղեռակների կտկտոցներ: Մարդագետներում շարժվեցին մարդկային կերպարանքներ: Լմանք ընկնում էին, ոմանք էլ վաղվղում: Արճակի ու հառակոնիսի ժողովուրդը բլրի ղագաթից սկանաաես եղավ Արճակի տնամերձ արտերում հատուկենտ աշխատող շինականների, ինչպես նաև մարդագետներում իրենց անասուններին արոտի տարած պաանինների գնդակահարմանը: Հետո, հետո... եռաճյուղ գարձած այդ հեղեղը քիչ առ քիչ ներծծվեց Արճակի մեջ: (Հետագայում իմացվեց, որ ջարդարները կոտորել էին Արճակում ձեռքն ընկած տղամարդկանց, իսկ մյուսներին քշել լճան):

Սուրբ խաանալիս, առանձին-առանձին հառակոնիս հասան մի ծանր վիրավոր և երկու այլ տղամարդ: Պատահականորեն մահից ճողուգրած այդ մարդիկ հայանեցին, որ Սրճակի վրա հարձակվողները եղել են գիշերվա կրակոցների ժամանակ գլուղից դուրս գնացած ղորքն ու ոստիկանություն մեծ մասը, Սարայի կայմակամն՝ իր ղորամասով սև թնդանոթներով և խուճապահար փախուսա ձեռքնող քրդերը: Երեք ճյուղի հարձակում գործողները իրենց առջեից քշելիս են եղել Սարայի կողմերից դեռված հայ կանանց՝ հնարավոր հակահարվածի ղեպքում նրանց ղոհ աալու միտումով: Գլուղի աջ ու ձախ կողմեր ասարածվածները ղիպուկ նշանառությամբ հնձել են մարդագետի հոտաղներին, դռան արանքի սերմնացաններին, գերեզմանոցի մեռելաթաղներին ու միաժամանակ ուժեղ համաղարկի տակ պահելով դյուղը, մաել այնտեղ ու սկսել սպանղը: Իրենց պահակակետում գանվող արճակցի ու հաղարացի հայ ոստիկանները սրախողաող էին արվել իրենց գործընկեր՝ հին, ծանոթ ոստիկանների ձեռքով:

Լուսարացիին կոստորոզների խառնամորխը դիմելոյ հառակոնիս: Սակայն Շոշ գետը դեռ չանցած, նրանք հանդիպեցին Արճակ-հառակոնիսի երիտասարդութեան միացալ ուժերի դիմադրութեանը, որ դիրք էին մտած մարգագետնի խանդակներում: Կոիվը շարունակվեց մինչև երեկո. խառնամորխը Արճակ վերադարձավ:

Մինչև լուսարաց ընակչութիւնը հառակոնիոց փախցնելու որոշումը դարձավ հրամայական: Վաղ առավոտյան, արճակցի փախսականների ու խառակոնիսցիների մի մասը շարժվեց դեպի Կըղըլջա հայկական դուռը: Երկու օր այնտեղ պատասպարվելուց հետո, երրորդ առավոտյան, նկատվել էր, որ Արճակից դուրս եկած ղորասյունները ոչ թե դեպի Վան էին գնացել, այլ ուղղվել էին Կըղըլջա: Երեք դուռերի, այն է՝ Արճակի, հառակոնիսի, Կըղըլջայի ընակչութիւնը ահարեկված սկսեց փախչել դեպի Կըղըլջա լեռը: Հիշյալ լեռից բավականին հեռու ընկած Թիմարի Նաբաթ լեռնի վեր էին փախել նաև տասնյակ այլ հայ դուռերի մահից ճողոպրածները: Հալածիչները սկսել էին ուժեղ կրակի տակ առնել Կըղըլջա լեռն օղակող ղորասյանը՝ նրան փախսական հայերի անդ դնելով և ապա սաացել էին կատաղի պատասխան: Թյուրիմացարար սկսված այս մարտը անել էր մի քանի ժամ, և օրը կիսվել էր ու նրանց չէր հաջողվել ծրագրված լրիվ սպանդը: Մութն ընկնելիս նրանք ուղղվեցին դեպի հարթավայրի գյուղերը: Իսկ Կըղըլջա ու Նաբաթ լեռներին ասլավի-նած երեսունից ավելի դուռերի հայ անդեն փախսասականները այդ ժամանակ շարժվում են առաջ և լուսադեմին հասնում վարչականորեն Վան-Տոսպ գավառի մեջ մանող, անդադրութեամբ Վանին բավականին մոտ Ավերակի դուռը: Լուսը բացվելուն Ավերակի էին հասել նաև Արճակից մինչև այդտեղ նրանց հեռապնդող ղորամասերն ու քրդական միավորումները, ինչպես նաև Վանի Զեվդեա փաշայի կողմից հղված ղորամասերը՝ թնդանոթներով զինված: Մինչև մայրամուտ Ավերակի գյուղը վերածվեց սպանվածներով լեցուն ավերակի: Մութն ընկնելիս ղորամասերը, թուլած իրենց պիրքերը, գնացին հանդստանալու:

Ավերակի տարրեր խրճիթներում կծկվելով իրենց կյանքը պահպանած փախսականները, որոնց թվում և տողերիս հեղինակը, նորից բռնեցին դժվարանց լեռնային ուղիները: Եվ հաջորդ օրվա ալբարացին, Սիկա դուռի միջով հասան Վան-Այդեստան՝ Ավերակիում թողած իրենց կեսից ավելի դիրքը: Ավերակից Վան հասած մարդկանց ընդհանուր թիվը շուրջ աասը հազար էր: Դա Արճակում սկսված եղեռնի 6-րդ օրն էր: Արճակից Վան հասնելու համար, ներառյալ և հանդստանալը, անհրաժեշտ էր վեց ժամ...

1915 թ. մայիսյան այն օրը, երբ ռուսական ռանակն ու հայ կառավորական ղեղերը ուժ էին դրել Վան, և ժողովուրդը ցնծության մեջ էր, Արճակը ևս մասն ուներ այդ ցնծության սեղանին: Կառավորական խմբերում կային նաև Բաքվից եկած ութ արճակցի: Այդ օրերին Արճակի խոշառնդված կյանքը ևս, որպես դավառի կենտրոն, որոշ չափով վերակենդանացավ: Գսվառապետ նշանակվեց խառակոնիսցի Շիրին Հակոբյանը (կառավարութեանը կից մշակական հայկական ներկայացուցիչ), որը հսկայական ջանք էր թափել մի քանի տասնյակ հայ դուռերի փախսականներին փրկելու ու Վան հասցնելու համար:

1915 թվականի Մեծ եղեռնին հաջորդած գաղթին արճակցիք ևս Բանդի Մահու դեպիդին թողնելով իրենց ղոհները, հողնած ու հուսալքված, հասան Բաքու: Սակայն նույն թվականի դեկտեմբերին Բաքվում անդավորված արճակցի որոշ ընտանիքների աշխատունակ աղամարդիկ արդեն վերադարձած իրենց դարավոր Արճակը, վերաշինում էին այն, այս անգամ արդեն ռուս դավառապետի աջակցությամբ:

Արճակի երդիկներից շարունակվեց ծուխ ընթերցանալ մինչև 1918 թ. ապրիլը: Արճակի աղղա-ընակչության համարյա քառորդը կաղմող այդ մարդիկ, հնարավորութեան չունենալով բռնել իրենց ծանոթ Արճակ-Բաքու կարճ ուղին, փախուստով, հեռապնդումներով ու ղոհներով հասան մինչև Բաղդադ: Այդ օրվանից էլ ընդմիջտ մարեց Արճակի երդիկներից երկինք բարձրացող ծուխը:

Ձ Բ Ա Ղ Մ ՈՒ Ն Ք

Ձմեռները լինում էին բքաշունչ ու երկարաակ: Ձյան շերտի հաստութիւնը երբեմն մի մեարի էր հասնում: Ձյան շատութեանից, հաճախ, աշնա-

նացան արաբը շնահեղձ էին լինում, ապղում, և արտաաբը ստիպված դարնանը վիժկիով վարում էր ու անդը դարնանացան անում: